ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐԹԻԿԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

2017 - 2022

ԱՐԹԻԿ 2017 թ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արթիկի պետական քոլեջը հիմնադրվել է 1965 թվականին որպես Լենինականի շինարարական տեխնիկումի մասնաճյուղ: 1966թ. այն վերակազմավորվել է և սկսել է գործել որպես Արթիկի ինդուստրիալ-տեխնոլոգիական տեխնիկում: 1999թ. դեկտեմբերի 3-ի ՀՀ ԿԳՆ կոլեգիայի N2/7Ե որոշմամբ տեխնիկումը վերանվանվել է «Արթիկի պետական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության: Իր գործունեության ընթացքում Արթիկի պետական քոլեջը սոցիալական գործընկերության հարաբերություններ է հաստատել Սովետական Միության տարբեր ուսումնական հաստատությունների, արդյունաբերական և շինարարական կազմակերպությունների հետ: 2005թ. «կրթության և գիտության ոլորտում ներդրած մեծագույն ավանդի համար» Արթիկի պետական քոլեջն արժանացել է ՀՀ ԿԳՆ ոսկե մեդալի: 2005թ. «միջնակարգ մասնագիտական կրթության բնագավառում ունեցած ձեռքբերումների և 40-ամյակի կապակցությամբ» Արթիկի պետական քոլեջը պարգևատրվել է ՀՀ Ազգային ժողովի պատվոգրով:

Իր գործունեության ընթացքում 12 մասնագիտությունների գծով քոլեջը տվել է 5400 շրջանավարտ: Նրանցից շատերը հետագայում շարունակել են կրթությունը բարձրագույն ուսումնական հաստատություններում: Քոլեջի շրջանավարտներն այսօր զբաղված են պետական և մասնավոր տնտեսության ոլորտներում, կարևոր դեր ունեն տարածաշրջանի հասարակական կյանքում:

Այսօր քոլեջն իրականացնում է բազմաճյուղ միջին մասնագիտական կրթական ծրագրեր: Քոլեջը բավարարում է տարածաշրջանի բնակչության կրթական պահանջները: Քոլեջում սովորում է տարեկան 300-ից ավելի ուսանող: Քոլեջը կողմնորոշված է ապահովելու աշխատաշուկայի ոչ միայն ընթացիկ պահանջները, այլև լրացնելու մասնագետների բացը տնտեսության զարգացմանը համընթաց:

Արթիկի պետական քոլեջն իր ուսանողների համար ապահովում է կրթության շարունակականության հնարավորություն: Քոլեջը համաձայնագրեր է կնքել Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարանի, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի, Հայաստանի պետական ագրարային համալսարանի, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղի հետ քոլեջի՝ բարձր առաջադիմություն ցուցաբերած

շրջանավարտների ուսումը բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագիտությամբ կրթությունը շարունակելու մասին:
Քոլեջն ապահովված է ուսումնական գործունեության իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական և ուսումնամեթոդական բազայով, որը պարբերաբար համալրվում և արդիականացվում է:

ՀՀ անկախացումից ի վեր էական փոփոխություններ են տեղի ունեցել կրթական համակարգի օրենդրական, տնտեսական և արժեքային տիրույթներում: Կրթական համակարգի կառավարման կարգի փոփոխությունները (հետևաբար՝ ուսումնական հաստատությունների իրավական վիճակի, իրավունքների և պարտականությունների, ֆինանսավորման ձևերի), ոչ պետական ուսումնական հաստատությունների առկայությունը, եվրոպական կրթական տարածությանն ինտեգրմնամ գործընթացները (հետևաբար՝ կրթության ձևերի ու բովանդակության), զարգացող տնտեսությանը բնորոշ սոցիալ-տնտեսական խնդիրները մարտահրավերներ են, որոնց պետք է արձագանքի կրթական բնագավառում գործել ցանկացող ուսումնական հաստատությունը:

Արթիկի պետական քոլեջի զարգացման հայեցակարգը սահմանում է ուսումնական հաստատության առաջընթացի հիմնական ուղղությունները, ռազմավարական նպատակներն ու խնդիրները միջնաժամկետ հեռանկարում: Հայեցակարգի հիմքում դրվել են «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը», «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը», «ՀՀ նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման ռազմավարությունը», «ՀՀ կրթության մասին օրենքը»:

ԱՐԹԻԿԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Քոլեջի գործունեության նշանակությունն ու հիմնական նպատակները ձևակերպված են հետևյալ առաքելություններում:

Մենք մասնակցում ենք տնտեսության համար աշխատանքային կադրերի պատրաստմանը: Արթիկի պետական քոլեջն ուսանողներին փոխանցում է շուկայի պահանջներին բավարարող գիտելիքներ, կարողություններ ու հմտությունները, նպաստում է նրանց համակողմանի զարգացմանը: *Մենք ապահովում ենք հասարակության մեջ համարժեք տեղ գրավելու հնարավորություն:*

Մենք գիտակցում ենք մեր դերը հասարակության կյանքում և պատրաստ ենք սոցիալական ծանրաբեռնվածություն կրել: Արթիկի պետական քոլեջը մասնակի կամ ամբողջությամբ զեղչում է վճարովի համակարգում սովորող կարիքավոր ուսանողների ուսման վարձը: *Մենք իրականացնում ենք ուսանողների սոցիալական աջակցության ձեռնարկներ:*

Արթիկի պետական քոլեջում կրթություն են ստանում նաև հաշմանդամություն ունեցող անձինք: Նրանց համար ապահովված են ուսումնական գործընթացին մասնակցելու անհրաժեշտ պայմաններ: *Մենք ապահովում ենք հավասար կրթական պայմաններ բոլորի համար:*

Արթիկի պետական քոլեջն իր գործունեությունը կազմակերպելիս արձագանքում է ուսանողների՝ ուսումնական գործընթացի և ուսանողական առօրյայի կազմակերպման հետ ցանկություններին և առաջարկություններին: Ակտիվ գործում է ուսանողական խորհուրդը: *Մենք ունկնդիր ենք նրանց, ում համար աշխատում ենք:*

Մենք փոխանցում ենք սերունդներին ազգային և համամարդկային արժեքներ, որոնք դավանում ենք: Արթիկի պետական քոլեջը կազմակերպում է մշակութային և դաստիարակչական բնույթի միջոցառումներ ուսանողների և համայնքի բնակչության համար: *Մենք մասնակցում ենք հասարակության արժեքային միջավայրի ձևավորմանը:*

Մենք համագործակցում ենք սոցիալական գործընկերների հետ: Նրանք մասնակցում են քոլեջի ուսումնադաստիարակչական գործունեության նպլանավորմանն ու իրականացմանը՝ տրամադրելով նաև գործնական փորձի ձեռքբերման հնարավորություն ուսանողական պրակտիկաների անցկացման ընթացքում: *Մենք կարևորում ենք սոցիալական գործընկերությունը:*

Մենք տեղեկացնում ենք հանրությանը քոլեջի գործունեության մասին: Արթիկի պետական քոլեջը համայնքի բնակչության համար ապահովում է քոլեջի կրթադաստիարակչական քաղաքականության պլանավորման գործընթացին մասնակցելու հնարավորություն: *Մենք բաց ենք պահում հաղորդակցման խողովակները:*

ՔՈԼԵՋԻ ԱՌԿԱ ՎԻՃԱԿԻ, ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. Մասնագիտությունների և ուսուցման կազմակերպման կարգի մասին

Առկա վիճակը

Քոլեջն իրականացնում է բազմաճյուղ միջին մասնագիտական կրթական ծրագրեր: Քոլեջը կադրեր է պատրաստում հետևյալ մասնագիտությունների գծով.

Ցերեկային ուսուցում

0601՝ «էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ» միջնակարգ ընդհանուր կրթությամբ (2 տարի տևողությամբ) և հիմնական ընդհանուր կրթությամբ (4 տարի տևողությամբ)

0201՝ «իրավագիտություն» միջնակարգ ընդհանուր կրթությամբ (2 տարի տևողությամբ)

0307՝ «ֆիզիկական կուլտուրա և սպորտ» հիմնական ընդհանուր կրթությամբ (4 տարի տևողությամբ)

2401՝«փոխադրումների կազմակերպումը և երթևեկության կառավարումն ավտոտրանսպորտում» հիմնական ընդհանուր կրթությամբ (4 տարի տևողությամբ)

0313՝ «նախադպրոցական կրթություն» միջնակարգ ընդհանուր կրթությամբ (2 տարի տևողությամբ)

0312՝ «դասավանդումը տարրական դասարաններում» միջնակարգ ընդհանուր կրթությամբ (3 տարի տևողությամբ)

0514՝ «դիզայն» միջնակարգ ընդհանուր կրթությամբ (2 տարի տևողությամբ)

Հեռակա ուսուցում

0601՝ «էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ» միջնակարգ ընդհանուր կրթությամբ (3 տարի տևողությամբ)

2401՝«փոխադրումների կազմակերպումը և երթևեկության կառավարումն ավտոտրանսպորտում» միջնակարգ ընդհանուր կրթությամբ (3 տարի 7 ամիս տևողությամբ)

0312՝ «դասավանդումը տարրական դասարաններում» միջնակարգ ընդհանուր կրթությամբ (3 տարի 10 ամիս տևողությամբ)

Ցերեկային ուսուցման բաժնում սովորում են 270 ուսանող, հեռակա բաժնում՝ 37 ուսանող: Ուսանողների ընդունելությունը կազմակերպվում է ՀՀ ԿԳՆ կողմից տվյալ ուսումնական տարվա համար հաստատված ընդունելության կանոններին համապատասխան:

Քոլեջն իրականացնում է նաև մասնագիտական ուսուցման կարճաժամկետ դասընթացներ: Այժմ կազմակերպվում է «համակարգչային օպետատորության» դասընթացը: ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի շրջանակներում և համագործակցելով Արթիկի զբաղվածության ծառայության տարածքային բաժնի հետ քոլեջում անցկացվել են մասնագիտական ուսուցման կարճաժամկետ դասընթացներ և պատրաստվել են 5 համակարգչային օպերատոր, 5 սալիկապատող:

Քոլեջում սովորում են ուսանողներ հանրապետության տարբեր մարզերից: Ուսումնառության ընթացքում ուսանողների ցուցաբերած առաջադիմությունը հաստատվում է ավարտական որակավորող հանձնաժողովի կողմից:

Խնդիրները

- Առանձին մասնագիտությունների գծով ուսանողների հոսքը սակավացել է, ինչը պայմանավորված է աշխատաշուկայում այդ մասնագիտությունների նկատմամբ պահանջարկի նվազմամբ:
- Նախորդ տարիների համեմատ ուսանողների թիվն էապես կրճատվել է, ինչը պայմանավորված է ինչպես ուսանողների վճարունակության, այնպես էլ դեմոգրաֆիկ գործոններով:

Ծրագրերը

- Այսօր քոլեջը բավարարում է տարածաշրջանի բնակչության կրթական պահանջները: Քոլեջը, սակայն, կողմնորոշված է բավարարելու աշխատաշուկայի ոչ միայն ընթացիկ պահանջները, այլև լրացնելու մասնագետների բացը զարգացող տնտեսության մի շարք բնագավառներում: Տարածաշրջանային քաղաքական զարգացումները ևս պայմանավորում են նոր մասնագիտությունների առաջացման հնարավորություն: Քոլեջը նպատակահարմար է գտնում ներդնել հետևյալ հեռանկարային մասնագիտությունները.

  - 3112՝ Գյուղացիական տնտեսության կազմակերպում (ֆերմեր),

  -2307՝ Զբոսաշրջություն (զբոսաշրջության ծառայությունների մասնագետ)

- 2301՝ Սպասարկման կազմակերպում (մենեջեր),

-0605՝ Փաստաթղթավարություն, տեղեկատվական և կազմակերպչական սպասարկում (գործավար):

- Պահանջարկ կա 0201՝ «իրավագիտություն» և 0514՝ «դիզայն» մասնագիտությունների նկատմամբ հիմնական ընդհանուր կրթության բազայով:
- Ունենալով անհրաժեշտ նյութատեխնիկական և ուսումնամեթոդական բազա՝ քոլեջը նպատակահարմար է գտնում կազմակերպել մասնագիտական ուսուցման կարճաժամկետ դասընթացներ հետևյալ մասնագիտությունների գծով.

  - համակարգչային գործավարություն,
  - մեքենայական գրաֆիկա (Photoshop),
  - համակարգչային հաշվապահություն,
  - սպասարկում առևտրի ոլորտում,
  - մետաղների մշակումը կտրումով:

2. Նյութատեխնիկական և ուսումնամեթոդական բազայի մասին

Առկա վիճակը

Քոլեջում գործում են 18 առարկայական կաբինետ, 2 համակարգչային լասարան, 2 լաբորատորիա: Քոլեջն ունի տիպային երկհարկ մազրադահլիճ և բաց սպորտային հրապարակ, 1 զինապահոց, 1 բեռնատար և 1 մարդատար մեքենա, ավտոտնակներ դրանց համար, ճաշարանի մասնաշենք, 2500մ^2 բարեկարգ պարսպապատված տարածք, որն անհրաժեշտության դեպքում կարելի է օգտագործել շենքային պայմանների բարելավման համար:

Քոլեջում գործում է մասնագիտական, մեթոդական և գեղարվեստական գրականությամբ հարուստ գրադարան: Քոլեջն ապահովված է ինտերնետային կապով:

ԵՄ կողմից միջին մասնագիտական կրթությանն ուղղված բյուջետային աջակցության ծրագրի շրջանակներում քոլեջն համալրվել է անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով՝ համակարգչային և էլեկտրական սարքավորումներով, գրասենյակային և դասասենյակային կահույքով:

Քոլեջում գործող բոլոր մասնագիտությունների գծով կազմվել և ներդրվել են մոդուլային ուսուցման ծրագրեր, դասավանդման համար անհրաժեշտ ուսումնամեթոդական փաստաթղթեր:

Խնդիրները

- Քոլեջի ֆինանսական հնարավորությունները սակավ են կապիտալ ներդրումներ կատարելու համար:

Ծրագրերը

- Քոլեջը նախատեսում է համալրել գրադարանը արդի գրականությամբ:
- Քոլեջը նախատեսում է ստեղծել էլեկտրոնային գրադարան, որտեղ տեղ կգտնեն ինչպես էլեկտրոնային գրքեր, այնպես էլ դասախոսների կողմից մշակված ուսումնական նյութեր:
- Սկսվել և ընթացքի մեջ է ուսումնանյութական բազայի արդիականացումն ու համալրումը: Նախատեսվում է ձեռք բերել.
  - լինգաֆոնային կաբինետ – 1 հատ
  - համակարգիչ – 20 հատ
  - UPS – 20 հատ
  - համակարգչային սեղան – 20 հատ
  - գրասենյակային սեղան – 10 հատ
  - պտտվող աթոռ – 20 հատ
  - գրատախտակ – 10 հատ
  - ռադիոտեխնիկական սարքավորումներ
- Նախատեսվում է քոլեջն ապահովել ջեռուցման համակարգով:
- Նախատեսվում է քոլեջի մարզադահլիճը համալրել մարզագույքով:
- Նախատեսվում է իրականացնել մարզադահլիճի և լսարանների մասնակի վերանորոգում:

3. Աշխատակազմի մասին

Առկա վիճակը

Քոլեջն ունի 67 աշխատող: Նրանցից 3-ը գտնվում են երեխայի խնամքի արձակուրդում: Աշխատողներից 36-ը դասախոս են, 31-ը կառավարչական և ուսումնաօժանդակ կազմի աշխատող են, նրանցից 5-ը նաև համատեղում են սրանք:

Մեկ դասախոսի հաշվով ուսանողների միջին թիվը կազմում է 6.5: Քոլեջի ընդհանուր անձնակազմի հաշվով ուսանողների միջին թիվը կազմում է 4:

4 դասախոս ունի երկու բարձրագույն կրթություն, 3 դասախոս՝ միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն, 29 դասախոս՝ բարձրագույն կրթություն: Արթիկի պետական քոլեջի 8 դասախոս պարգևատրվել է ՀՀ ԿԳՆ պատվոգրերով և շնորհակալագրերով:

8 դասախոս համատեղում են մանկավարժական գործունեությունը մասնագիտական աշխատքի հետ այլ հիմնարկներում (մարզիչ սպորտդպրոցում, Արթիկի կոմունալ տնտեսության ԲԲԸ տնօրեն, ՀՀ վիճակագրական ծառայության Արթիկի տարածքային բաժնի պետ, Հայ ջրմուղ-կոյուղու Արթիկաի բաժանմունքի տնօրեն, քաղաքապետարանի կրթության բաժնի տեսուչ, Երաժշտական դպրոցի տնօրեն):

10 դասախոս ապահովված է 720 դասաժամով, 15 դասախոս՝ 300-500 դասաժամով, 15 դասախոս՝ 100-300 դասաժամով:

Քոլեջում դասավանդում են 10 սկսնակ դասախոս (1-5 տարի մանկավարժական աշխատանքային փորձով), 20 դասախոս (5-15 տարի մանկավարժական աշխատանքային փորձով), 5 դասախոս (15 և ավելի տարի մանկավարժական աշխատանքային փորձով):

Խնդիրները

- Ցածր է դասախոսների աշխատավարձը. այն համարժեք չէ մանկավարժի աշխատանքի բարդությանն ու ծավալին:
- Դասախոսների մի մասը թերբեռնված է:

Ծրագրերը

- Նախատեսվում է իրականացնել աշխատակազմի օպտիմալացում:
- Անհրաժեշտ է դասախոսներին ապահովել արդյունավետ և բեղմնավոր գործունեությանն արժանի վարձատրությամբ:
- Անհրաժեշտ է դասախոսների տարբերակված վարձատրության ներդրմամբ խրախուսուսել լավագույն աշխատանքը:

4. Դասավանդողների որակավորման բարձրացման, վերապատրաստման և վերաորակաորման մասին

Առկա վիճակը

Վերջին տարիներին քոլեջի դասախոսները մասնակցել են ՀՀ ԿԳՆ կողմից կազմակերպված որակավորման բարձրացման և վերաորակաորման դասընթացներին: Դասախոսների մեծ մասը մասնակցել են «Մասնագիտական մանկավարժություն» և «Մոդուլային ուսուցման առանձնահատկությունները» թեմաներով վերապատրաստման դասընթացներին:

Դասախոսների ինքնակրթության, մեթոդամանկավարժական վարպետության բարձրացման նպատակով քոլեջում կազմակերպվում են գիտագործնական կոնֆերանսներ, թեմատիկ սեմինարներ և շնորհանդեսներ:

Դասախոսների համար քոլեջում պարբերաբար կազմակերպվում են համակարգչային գրագիտության դասընթացներ:

Ծրագրերը

- Նախատեսվում է բոլոր դասախոսներին մասնակից դարձնել ՀՀ ԿԳՆ կողմից կազմակերպվող որակավորման բարձրացման և վերաորակաորման դասընթացներին:

5. Ֆինանսավորման մասին

Առկա վիճակը

Քոլեջն ունի ֆինանսավորման երկու աղբյուր՝ բյուջետային և արտաբյուջետային: Պետական բյուջեից քոլեջը ֆինանսավորվում է պետական պատվերի շրջանակներում սովորող ուսանողների թվաքանակով: Պետական պատվերի շրջանակներում քոլեջում սովորում է 75 ուսանող, վճարովի հիմունքներով սովորում է 195 ուսանող: Ցերեկային ուսուցման համար քոլեջը սահմանել է 95000 դրամ ուսման վարձ, հեռակա ուսուցման համար՝ 65000 դրամ: Վարձավճարները հավաքագրվում են ամբողջությամբ:

Խնդիրները

- Պետական բյուջեից քոլեջին հատկացվող ֆինանսավորումը բավարարում է միայն աշխատավարձերի վճարման համար
- Քոլեջի ֆինանսական հնարավորությունները սակավ են կապիտալ ներդրումներ կատարելու համար
- Քոլեջն ունի նախորդ տարիներից կուտակած պարտք

Ծրագրերը

- Անհրաժեշտ է մշակել ֆինանսատնտեսական միջոցների առավել արդյունավետ տնօրինման մեխանիզմներ

6. Սոցիալական գործընկերության մասին

Առկա վիճակը

Արթիկի պետական քոլեջն ունի սոցիալական գործընկերության հարաբերություններ հաստատելու արդյունավետ փորձ: Իր գործունեության ընթացքում քոլեջը համագործակցել է Սովետական Միության տարբեր ուսումնական հաստատությունների, արդյունաբերական և շինարարական կազմակերպությունների հետ: Քոլեջը մասնագետներ է պատրաստել Արթիկ քաղաքի և Արթիկի շրջանի մի շարք հիմնարկությունների, ձեռնարկությունների և գործարանների համար:

Այսօր քոլեջը մշակել և իրականացնում է սոցիալական գործընկերության հետևյալ միջոցառումները.

- Սոցիալական գործընկերները քոլեջին տրամադրում են անհրաժեշտ տեղեկատվություն, խորհրդատվություն իրենց գործունեության վերաբերյալ:
- Սոցիալական գործընկերները հնարավորություն են ընձեռում ուսանողների պրակտիկան անցկացնել իրենց կազմակերպություններում:
- Սոցիալական գործընկերները մասնակցում են քոլեջում անցկացվող մասնագիտական սեմինարներին, կոնֆերանսներին:
- Սոցիալական գործընկերները մասնակցում են մոդուլային ծրագրերում նշվող «կատարման չափորոշիչների» սահմանմանը:
- Քոլեջի դասախոսները և ուսանողները մասնակցում են Զբաղվածության ծառայության կողմից Գյումրիում կազմակերպվող «Աշխատանքի շուկա» միջոցառմանը:
- Քոլեջը բարձր առաջադիմությամբ ավարտած շրջանավարտները հնարավորություն ունեն ուսումը շարունակելու բարձրագույն ուսումնական հաստատությունների բարձր կուրսերում:

Խնդիրները

- Անցումային տնտեսությամբ երկրներին բնորոշ է աշխատաշուկայի անկայունությունը, ինչը դժվարացնում է սոցիալական գործընկերների հետ երկարաժամկետ համագործակցությունը:

- Գործելով անկայուն տնտեսական միջավայրում սոցիալական գործընկերները չեն տիրապետում քոլեջին նյութապես օժանդակելու ցանկալի միջոցների:

Ծրագրերը

- Նախատեսվում է սոցիալական գործընկերներին մասնակից դարձնել քոլեջի նյութատեխնիկական բազայի համալրմանը:
- Նախատեսվում է հայցել սոցիալական գործընկերների առավել ակտիվ աջակցությունը քոլեջի շրջանավարտներին աշխատանքի տեղավման հարցում:
- Նախատեսվում է առաջարկել սոցիալական գործընկերներին ուսանողների համար կազմակերպել են արտադրական ուսուցման դասընթացներ:
- Նախատեսվում է սոցիալական գործընկերներին առաջարկել դասավանդողների համար կազմակերպել փորձի փոխանակման շրջայցեր են իրենց կազմակերպություններում:

ԱՐԹԻԿԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ

Քոլեջի տեսլականով սահմանվում է քոլեջի ցանկալի տեղը կրթական ծառայությունների շուկայում, նախանշվում է քոլեջի ներդրումը տարածաշրջանի տնտեսության զարգացման մեջ և հասարակական կյանքում:

Քոլեջի հեռահար նպատակները.

- Բարձրացնել միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների վարկանիշը կրթական ծառայությունների շուկայում:
- Պահպանել քոլեջի ներկայիս համբավը որպես հանրապետության և մարզի լավագույն քոլեջներից մեկը:
- Ընդլայնել կրթական ծառայությունների տեսականին՝ ներդնելով նոր մասնագիտություններ և մասնագիտական ուսուցման կարճաժամկետ նոր դասընթացներ:
- Ապահովել քոլեջի կողմից տրամադրվող կրթական ծառայությունների որակի համապատասխանությունը կրթական չափորոշիչներին:
- Աշխատաշուկան ապահովել բարձրորակ մասնագետներով, ում գիտելիքները և ունակությունները համապատասխանում են տնտեսության արդի պահանջներին:
- Աշխատաշուկան ապահովել մասնագետներով, որքեր տիրապետում են մասնագիտական աճի և աշխատանքային առաջխաղացման կազմակերպման կարողությունների:
- Դասախոսական կոլեկտիվին ապահովել արդյունավետ և բեղմնավոր գործունեության համարժեք պայմաններ:
- Կազմակերպել դասախոսների մասնագիտական աճը:
- Ստեղծել քոլեջի ինտերնետային էջը:
- Իրականացնել քոլեջի մասնաշենքի և մարզադահլիճի վերանորոգում, ուսումնական պայմանների բարելավում:
- Հարստացնել քոլեջի նյութատեխնիկական բազան:
- Ներդնել վարչական և ֆինանսատնտեսական կառավարման արդյունավետ մեխանիզմներ:

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Թվարկած նպատակները պահանջում են քոլեջի կառավարման և ռազմավարական զարգացման ծրագրի մշակման բացառապես նոր մոտեցումներ՝ հիմնված արտաքին մարտահրավերների, մրցակցային միջավայրի, առկա առավելությունների և պոտենցիալ հնարավորությունների վերլուծության վրա:

SWOT վերլուծության միջոցով կատարվել է քոլեջի ուժեղ և թույլ կողմերի, պոտենցիալ հնարավորությունների և արտաքին վտանգների բացահայտում և գնահատում, որոնց միջոցով սահմանվում են քոլեջի զարգացման կողմնորոշիչները:

S	• Քոլեջն ունի բարձր վարկանիշ Շիրակի տարածաշրջանում և հանրապետությունում: • Քոլեջն ունի քառահարկ մասնաշենք: • Քոլեջն ունի տիպային երկհարկ մազրադահլիճ և բաց սպորտային հրապարակ: • Քոլեջն ունի 2500մ^2 բարեկարգ պարսպապատված տարածք, որն ըստ անհրաժեշտության կարելի է օգտագործել շենքային պայմանների բարելավման համար: • Քոլեջն ապահովված է ուսումնանյութական և ուսումնամեթոդական բազայով: • Քոլեջն ունի արհեստավարժ մասնագետներ: • Քոլեջի դասախոսները մասնակցել են ՀՀ ԿԳՆ կողմից կազմակերպված որակավորման և վերաորակավորման դասընթացներին: • Քոլեջն ունի մանկավարժական կադրերի հետ աշխատելու, նրանց աշխատանքային առաջխաղացումը կազմակերպելու փորձ: • Դասախոսական անձնակազմն ունի մեծ ծավալի մեթոդական աշխատանքներ իրականացնելու փորձ: • Քոլեջում տիրում է առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ: • Քոլեջն ունի մշակված և հստակ գործող աշխատակարգ:

	• Քոլեջը մասնագիտացված է 2401, 0307, 0601, 0201, 0313, 0312, շինարարական սառը մետաղների մասնագիտությունների գծով մասնագետների պատրաստման գործում: • Քոլեջը համագործակցում է գործող մասնագիտությունների հետ առնչող սոցիալական գործընկերների հետ:
W	• Ցածր է դասախոսական անձնակազմի աշխատավարձը: • Քոլեջի աշխատակազմը գերբեռնված է. մեծ է մեկ ուսանողին ընկնող աշխատողների քանակը: • Քոլեջն ապահովված չէ ջեռուցման համակարգով: • Քոլեջն ունի ուսումնանյութական գույքի համալրման կարիք: • Քոլեջն ունի գրադարանային ֆոնդն արդի գրականությամբ համալրման և էլեկտրոնային գրադարանի ստեղծման կարիք: • Պետական բյուջեից քոլեջին հատկացվող ֆինանսավորումը բավարար չէ կապիտալ ներդրումներ կատարելու համար: • Քոլեջն ունի նախորդ տարիներից կուտակած պարտք:
O	• Դասախոսական անձնակազմը կարող է իրականացնել մեծ ծավալի մեթոդական աշխատանքներ: • Ունենալով անհրաժեշտ նյութատեխնիկական և ուսումնամեթոդական բազա՝ քոլեջն ունի մասնագիտական ուսուցման կարճաժամկետ դասընթացների կազմակերպման հնարավորություն: • Քոլեջն կարող է մեթոդական ծառայություններ մատուցել այլ ուսումնական հաստատություններին: • Քոլեջն ունի մասնագիտությունների ցանկի ընդլայնման հնարավորություն: • Քոլեջն ունի գործող և նոր մասնագիտությունների դասավանդման համար համար բարձորակ մասնագետների հավաքագրման հնարավորություն: • Քոլեջն ունի տարածք, որն ըստ անհրաժեշտության կարելի է վերակառուցել հանրակացարանի:

T	• Անկայուն է Շիրակի մարզի սոցիալ-տնտեսական վիճակը: • Անկայուն է մրցակցային դաշտը: Դիմորդների թիվը նվազագ է:

Արդյունքում

- Քոլեջն ունի մրցակցային առավելություններ: Այդ առավելությունների իրականացման համար առկա են համապատասխան ուժեղ կողմեր: Ինչը խոսում է ռազմավարական զարգացման համար բավարար ներուժի մասին:
- Մի շարք գործոններ անհրաժեշտ է ուժեղացնել, որ ապագայում դրանք չխոչընդոտեն և հնարավոր լինի օգտվել բարենպաստ հնարավորություններից:
- Քոլեջն ի վիճակի է դիմակայելու արտաքին վտանգներին իր մրցակցային առավելությունների հաշվին:

ՔՈԼԵՋԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Քոլեջի զարգացման ռազմավարությունը սահմանում է անցումն այսօրվանից դեպի վաղը՝ առաքելությունից դեպի տեսլական:

Ֆինանսական ռազմավարություն

Սեփական միջոցների առավել նպատակային կառավարման միջոցով հասնել ֆինանսական ցուցանիշների, որոնք կապահովեն կազմակերպության կայուն զարգացումը:

Մարքետինգային ռազմավարություն

Ընդլայնելով կրթական ծառայությունների տեսականին և կրթության որակն ու բովանդակությունը համապատասխանեցնելով աշխատաշուկայի արդի պահանջներին՝ ամրապնդել քոլեջի դիրքը և ընդարձակել գործունեության հատվածը կրթական ծառայությունների շուկայում:

Անձնակազմի կառավարման ռազմավարություն

Կորպորատիվ կուլտուրայի լավագույն ավանդույթների պահպանման, ֆինանսասական ու բարոյահոգեբանական տարբերակված շահադրդման, դասախոսների աշխատանքային առաջխաղացման ու մասնագիտական որակավորման բարձրացման կազմակերպման միջոցով դասախոսական կոլեկտիվի համար ապահովել բեղմնավոր աշխատանքի պայմաններ, խթանել դասախոսների մասնագիտական աճը և աշխատանքային նոր արժեքներ ներմուծել:

Մասնագիտական ուսումնական հաստատությունը բարդ սոցիալ-մանկավարժական համակարգ է: Այս համակարգը կարող է արդյունավետ իրականացնել իր գործառույթներն ու զարգանալ միայն կազմակերպական կառուցվածքի և կառավարման տեխնոլոգիայի ապահովման, դրանք փոխկապակցող մեխանիզմի անխափան աշխատանքի, ինչպես նաև կազմակերպոոության ղեկավարի նպատակասլաց և հաստատուն դիրքորոշման դեպքում: